

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք չորեքշաբթի եւ շաբաթ օրերը կը հրատարակուի : Տարեկան բաժանորդագինն է Պոլսոյ համար երեք , իսկ գաւառաց համար երեք ու կես արծաթ մեծիտ կանխիկ : Ծանուցման տողը երկու դրուշ է :

Խմբագրութեան ուղղակի նամակ եւ ջր տրուի : Լրագրոյս վերաբերեալ ո եւ է գիր պետք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Յ. Միլիթեան Իրգա փաշա խան քիւ. 3 :

ԹԻԻ 560 ՏԱՐԻ Ժ.

ՇԱԲԱԹ

1879 ՍԵՊՏԵՄԲԵՐ 29

ԱԶԳԱՅԻՆ

Խառն ժողովը հինգշաբթի աւուր նըստին մէջ Մշոյ Ս. Կարապետի վանուց խնդիրն նկատողութեան առնելով, Գեր. վանահօր և ամբաստանող վարդապետաց դրուած իւնները աչքէ անցուց . սակայն առանց վիճաբանութեան հիմ մ'առնենալու խնդիրը որոշել անհնար լինելով, վերստին վանորէից խորհրդոյ յղեց խընդիրը, այնու պայմանաւ որ քննութիւնը փութացնելով տեղեկագիրը Խառն ժողովոյ բերէ ընդ փոյթ . ապա թէ ոչ Խառն ժողովն ինքը պիտի կատարէ հարկ եղած քննութիւնը : Այս առթիւ վանորէից խորհրդոյ պակասած խնդամաց տեղ Ապտուլահ Գէորգ և Գարամաճեան Մինաս էֆէնտիները ընտրուեցան :

Ս. Պատրիարք Հայրը չորեքշաբթի օր Գումգափուի Մայր վարժարանը այցելութեան երթալով, վարժարանին ուսմանց ծրագիրը և աշակերտաց վիճակը քննել և յայտարարել է թէ այսուհետև վարժարանին վրայ հսկողութիւն պիտի ընէ ինքը և շաբաթը երկու երեք անգամ այցելութիւն պիտի ընէ : Եւ պատուիրել է որ այսպէս ծանուցանեն ուր որ անկ է :

Ս. Պատրիարք Հօր այս այցելութիւնը մեծ քաջալերութիւն կընծայէ անչուչտ վարժարանին պաշտօնէութեան և ուսանողաց . և կը փափաքիմք ի սրտէ որ Ս. Պատրիարք Հայրը իւր բաղմնազրաւ վիճակին մէջ ժամանակ և կարողութիւն ունենայ իւր հսկողութիւնն առաջ վարելու զի ներսէս Պատրիարքի դպրոցական հմտութենէն և գիտական փորձառութենէն մեծապէս կրնայ օգտիլ Մայր վարժարանը :

Ս. Պատրիարք Հայրը ասկէ առաջ Խորհրդի Տ. Պետրոս, Տ. Սարգիս վարդապետները Խորհրդէն հեռացուցած և ուրոյն ուրոյն Հայաստանի վանքերն երթալ հրամայած էր . սակայն զարմանօք տեսնուեցաւ որ Սարգիս վարդապետ փոխանակ հրամայեալ տեղն երթալու ուղղակի Պոլիս եկեր է անչուչտ Ս. Պատրիարքին ներողութենէն օգուտ քաղելու համար : Սակայն երբ Ս. Պատրիարքէն ընդունելութիւն խնդրել է, ն. Սըրբազնութիւնը մերժել է :

Գէորգ, Սարգիս և Պետրոս վարդապետը Խորհրդի ցեցն և ուտիճն եղած են և առանց ասոնց հեռացման անկա-

րելի է որ Խորհրդը խաղաղի և անդորրութեան երես տեսնէ :

Ահաւասիկ այս անգամ ինչպե՞ս որ Գեր. Սրուանձտեանց զօրաւոր կուսակցութեան մը հանդիպելով ի Խորհրդէն անկարելի եղեր է իրեն հոն մնալ և պարտաւորել է Ակն իւր առաջնորդատելին վերադառնալ :

Ասիկա դաս մը կրնայ ըլլալ այն կարգի անձանց որոնք ժողովրդեան պահանջումները չկարենալով գոհացնել ժողովրդական հոսանաց կը մատնուին :

Իմացանք թէ ձերմակեան սրբակեաց վարդապետը վաղը սուրբ պատարագ պիտի մատուցանէ Իւսկիււաւր Ս. Խաչ եկեղեցին :

Մենք այնպէս կը կարծեմք թէ ձերմակեան ինքնաբերաբար կը պատարագէ վաղը առանց Պատրիարքարանի հրամանի . զի երկու շաբաթ առաջ պատարագելու առաջարկութիւնը մերժող Պատրիարքարանը ի հարկէ հիմա ալ թողտուութիւն չընդհեր քննութեամբ և դատաստանաւ յանցապարտ լծուեալ վարդապետի մը որ եկեղեցական օրինաց դէմ հետաժ է ապերասան կերպով :

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑՈՒՄ

... Խմբագիր
Արարատեան ընկերութեան Գ. տեղեկագրին մէջ զարմանօք կը կարդանք հետեւեալ տողերը որք մեծ տպաւորութիւն գործեցին ինձ և շատերի վերայ :

«Մեր յայտագիրն սակաւ ինչ կը շեղի այն աւանդական դրութենէն որով կաւանդուի ցարդ Աղգային վարժարանաց մէջ Քրիստոսի վարդապետութիւն . . . : Երբորդ տարին աշակերտը կսկսի ճանաչել զՔրիստոս իբր բարոյական մարդ » :

Մենք չուզեցինք հաւատալ թէ Արարատեան ընկերը ընդհանրապէս համակարծիք են այսպիսի հակաքրիստոնէական դաւանութեան մը . նոյնպէս Ամբողջ Հայ Աղգը և Գուր, Տէր Խմբագիր : Լոյսը կառողջէ, միանգամայն կը փրկէ ըսած էինք . . . հոս՝ վէրք մը կը տեսնամ . վէրք մը՝ որ դարերէ անտի նուիրագործուած հաւատք մը կը խոցուտէ, — Քրիստոսի Աստուածութիւնը :

Մեր դիտողութիւնն էն այս առթիւ թողով ապառնիին, մասնաւորաբար կը խնդրեմ յիշեալ հատուածին հեղինակէն որ պէտք եղած բացատրութիւններն շը-

նորհէ առ ի վերաշինութիւն մտաց շիտութեամբ :

Որով և ես կը մնամ Աղգի, եկեղեցւոյ հաւատարիմ 28 սեպտ. 1879 Յորդիւն Յ. Չորճեան Կ. Պոլիս

Մեզու Հայաստանի մէջ կը կարգաւոր հետեւեալը .

Բ Ա Գ Ո Ի
Ամսոյս 19ին կէս գիշերին Յովհաննէս Դաւթեան Լազարեանց հանգուցեալ զօրապետի (գեներալ ալիւտանդ) մարմինը շոգենաւով Չեքուչլարից բերին Բագու : Տեղիս հայ հոգևորական դասը մեծ փառքով և հանգիստով 20ին ընդունեց հանգուցեալի դիակը : Մարդկանց բազմութիւնը անչափ էր : Հայ հասարակութիւնը արտասուքով և մեծ յարգանքով պաշտում էր համարեա թէ զօրապետի դագաղը : Թէև թուով 24 զինուորներ, բացի դասաւորված զօրքից և աստիճանաւորներից, արդէն պատրաստ կանգնած էին շարժուանց ծանր դագաղը բարձրացնելու և եկեղեցի տանելու համար . բայց հայ երիտասարդները արծուի պէս մօտեցան և իրանք ուսով տարին մինչև Լուսաւորիչ եկեղեցին, ուր միւս օր 21ին պէտք է պատարագ մատուցուեր : Առաւօտեան 9 ժամին պատարագը սկսուեցաւ և վերջացաւ 12 ժամին : Պատարագիչ էր բարեկարգիչ Թ. Աւագ քահանայն : Հանդէսը փառաւոր էր և գեղեցիկ : Վերջում պատարագիչ քահանայն մի փոքրիկ ճառով յայտնեց իւր սրտառուչ զգացմունքը դէպի հանգուցեալը, որին հետեւեց և Խորէն քահանայ Միրզաբէգեանցը մի համանօտ սրտաշարժ ճառով . սորանից յետոյ և մի ուրիշ քահանայ մի բաւական երկարատև ճառով : Երկու սերունի բազմութիւնն ևս այնքան շատ էր, որ եկեղեցում ասեղ զցեղիր գետնին չէր ընկնիլ . նոյնպէս եկեղեցուց դուրս : Միշտ ոստիկանութիւնը հսկում էր ամբոխին, եթէ ոչ շատերը կը կոխտուէին բազմութեան ոտները ի տակ : Գագաղը եկեղեցւոյ դուրս տանելու ժամանակ, թէև պատրաստ էին զինուորներ, բայց դարձեալ հայ երիտասարդները բարձրացրին իւրեանց ուսերի վերայ . հողևորական դասով, խուռն բաղմութեամբ տարան քաղաքից դուրս բաւական հեռի, ուր պատրաստ էր փոշտային սայլը, որ պիտի տանէր հանգուցեալին Թիֆլիս : Այսպէս, մի

չորս ամիս դորանից յառաջ, որ ուրախութեամբ և մեծ հանդեսով ընդունեց Բագուի հայ հասարակութիւնը իւրեանց սիրելի և պաշտելի հայ զօրապետին, այսօր սուգով և արտասուքով յուզարկաւոր եղաւ նորան:

Գարձեալ Տփլիսի Մեղու Հայաստանի լրագրին մէջ կը կարգամբ թէ Ախալքալաքի մէջ Յուլիս 1 ին և 17 ին տեղացի քանի մը երիտասարդներ յօգուտ Կ. Պօլսոյ Կիլիկեան Բնկերութեան ներկայացուածներ տուեր են յորոց ծախքը հանելով 100 բուլլի շահ գոյացեր է:

Այս գումարը Մեղուի խմբագրութեան զրկուեր է Կիլիկեան Բնկերութեան յանձնելու համար:

Բաղէշէն հետեւեալ հարստահարութիւնը կը գրեն մեզ.

... Խմբագիր

« Ասկէ ութ օր յառաջ տասերեք տարու տաճիկ պատանի մը լծի մը մէջ մինչդեռ խումբ մը հայ և տաճիկ տղայքներով հանդերձ կը լողանայր, յանկարծ գլուխ կը կտորի, այս դէպք տասնմէկ տարու հայ տղայի մը վրայ դնելով կառավարութեան մատնեցին. և կառավարութիւն առանց օրինի հարցաքննութիւն ընելու բանտարկեց ութ օրուան չափ, որ ոչ երբէք տէրութեան օրէնք կը տրամադրէ այսպիսիքը բանտարկել և այս մասին որչափ որ տեղւոյս ազգութիւն Ղատիին բողոքեցին, չը լսեց, թող զայս, տղան աղքատ ըլլալուն ազգայիններէ տուգանք կը պահանջեն:

« Չորս օր յառաջ տեղւոյս ոստիկանաց յիսնապետի որդին որ քաներկու տարու կայ, շուկայի մէջ հրապարակաւ տասնուչորսամեայ հայ տղայ մը առանց իրիք պատճառի դաշոյնով վիրաւորեց. կառավարութեան բողոքուած ատեն ոճրագործին փոխանակ արժանի պատիժ մը տալու արձակ համարձակ աստ և անդ շրջեցոյց:

« Նոյնպէս երկու օր յառաջ հայ երիտասարդներէն մին ցորեկ ատեն իւր երիւարը իրենց տան քովի դետ արբուցանելու տարած ատեն տաճիկի մէկը վրան յարձակած գլխուն մէկ երկու տապարի վէրք տալով երիւարէն ուշաթափ վար բերած երիւարն կառնէ և կերթայ, հուսկ ուրեմն տղան արիւնաթաթաւ գտնուելով իւր տուն կը տարուի. և այսօր ծանր հիւանդ է:

« Նոյն օր դարձեալ քանի մը տուն Սըղերդցի ճանապարհորդ ազգայիններ քաղաքէս կէս ժամ հեռու դէպի իրենց հայրենիք մեկնած ատեն քիւրտերէն կողպտուելով յետ դարձան և այսօր իրենց մատաղ զաւակներով հանդերձ դուռներ ինկած հաց կը մուրան վերջին աստիճան սրտամորմոքողովելութեամբ. ասոնց համար թէպէտ կառավարութեան բողոքուեր է, բայց քանի որ կառավարութեան դուռ կան զեղծումներ, ինչ կարելի է յուսացուի թէ լացող Հայուն մը արտասուք պիտի սրբուի և անմեղ արեան մը վրէժ պիտի լուծուի. այս

զեղծմանց բուն պատճառ նախ կառավարութեան դուռ հոյոց վկայութիւն չընդունուել, երկրորդ կաշառակերութիւնն է:

« Վանայ համար որոշուած անգղիական հիւպատոս երեկ չէ եռանդ երբ լուր առնուեցաւ թէ քաղաքս պիտի ժամանէ ամեն կարգի ազգայիններ նաև դպրոցական երգեցիկ մանկտիներ եկեղեցական շապիկներով զարդարեալ քաղաքէս մէկ ժամ հեռու հրապարակի մը մէջ խուռն բաղմութեամբ, ամենայն պատուով և շքեղութեամբ դիմաւորելու ելան. մէկ կողմէն աշակերտաց ներդաշնակ հայկական քաղցրագեղեղ երգերու երգասացութիւն և միւս կողմէն խուռն ժողովրդեան դիմաց զուարթութիւն և սիրալիր ինդուլթիւն մեծ և սիրալիր տեսարան մը կը ներկայացունէր և վսեմ հիւպատոս ինդուլթիւ գիմօք ամէն կարգի ազգայիններ զատ զատ նաև դպրոցական սանուհիք ողջունելով մեծաշուք Աւետիս Էֆէնտի մահտեսի Խաչմանուկեանին իջևանեցաւ, երկրորդ օր մեծ ֆէնտերեան Գրիգոր աղային հիւրընկալուեցաւ. աղգային խորհրդարանն անձամբ այցելեց, նաև վանքեր և ազգայնոցս հարստահարութեանց ցանկը մեր օրագրութեանէն քաղելով իրեն յանձնուեցաւ. վերջապէս քաղաքիս ազգայինք ամենայն մասամբ սէր, յարգանք, և ընդունելութիւն ընծայեցին նմա արժանապէս »:

Սերաստիայէն ալ հետեւեալ հարստահարութիւնը կը գրեն մեզ.

Խմբագիր Տէր

Մեր Աղգին կրած ազգի ազգի տառապանքները և Եւրոպական տէրութեանց ընելիք բարենորոգումները ըստիպած են զմեզ մեր դպրոցական գրասեղաններու վրայ ընկերութիւն մի կազմել որն որ նպատակ ունենայ, 1. Աղգներկայացուցմանը ազգայնոց օգտակար ծառայութիւններ մատուցանել. 2. ցարդ գործադրուած և գործադրելիք զեղծումներն ու հարստահարութիւնները հաղորդել լրագրաց:

Բնկերութեանս գործադիր ժողովը ըստ օրինի իւր ընդհանուր ժողովէն ընտրուած է, և իւր կազմութեանէն աստի բաժանորդագրութեամբ և նուէրներով փոքր ինչ պիտոյքներ հայթայթած է ներկայացուցման տալու, ինչպէս նաև մի քանի անգամ ալ տուած է, և ահա իւր ութամսեայ հասակին մէջ կը ներկայացնէ պատուական լրագրոյդ հետըզհետէ քաղած զեղծումներն, խնդրելով որ չէք զլանար արձագանք տալ իւր գրուածոց և յայտ Եւրոպացոց ներկայել Աղգիս կրած ազգի ազգի հալածմունք:

1. 1879 թուականին սկիզբները Եէնի Եափանցի Ասլան պէյ և եղբայրը Ահմէտ պէյ Եափայ ալթուն գիւղացի Գաֆալը Պետրոս անուն անձին 2 զօմէշն և 5 եր աւարի կ'առնուն և երբ Պետրոս ետևէն երթալով աղաչանք կը ինդրէ, 20 հատ 100 նոց թղթադրամ կը խնդրեն

որպէս զի զանոնք յանձնեն, և երբ կ'առնուն 20 հատ 100 նոց թղթադրամը, ոչինչ կը վերադարձնեն: Եւ այս խեղճ անձը քանիցս բողոքեց կառավարութեան, բայց ինչ պիտի չահէր, ոչինչ, և մանաւանդ նոյնչափ մ' ալ վրայ տալ:

2. 1879 Յուլիս 1 ին Արթուլայ Չիթլիցի Պօլօղլանի որդի Կարապետի մի հորթը Ձառիւնճուիցի թըքաց Լարտին մէջ մտնելուն համար խեղճ անձը այնչափ կը դանակոծուի որ ծեծին տակ հոգին կ'առնուէ: Գատաստանը յաւտենականին մնացած է:

3. 1879 Յունիս 3. Արթուլայի Կէտավիւզ գիւղացի Բէշիշեան Վարդանի աղջիկը (որ Բէշիւան Սէրայ Ղայմէճ-օղլիի որդւոյն հետ ամուսնացեալ է) Ղըզըլիցի տաճիկ գիւղացի Փէհլիւլանի տղայոց և այլ 17 անձանց դազանական կրից զոհ դնալէ վերջ, երբ մանուկ մը կը վիժի, և հայրը Վարդան զայն առնելով կը բերէ 'ի Սերաստիա' կառավարութեան դուռը, քաղաքին կից Գ-Է Է-Պօլսոյ գալտավայրը ետևէն կը հասնին վիժած դիակը ձեռքէն առնելէ վերջ այնչափ կը դանակած են, որ եթէ ժողովուրդը հասնելով չառնուին ձեռքերէն, այս ալ զոհ պիտի երթար մահուան գիրկը: Ահա այս ալ կառավարութեան քթին տակ, բայց չուղեր տեսնել ու հոտ առնել:

Առ այժմ այսչափ գրելով, խնդրեմք բարեհաճեցէք զայս հրատարակել որով Մնամք միշտ անձնուէր Աղգիս և Չեղի դիմաց Սրչակունեաց ընկ.

Ատենադպիր Տեսուչ
Յ. Մանուկեան Հայ Ա. Վարդանեան
21 օգոստոս 1878
Սերաստիա

Մուշէն

... Խմբագիր Հայրենիք պատուական լրագրոյ:

Մշոյ Մուշեղեան թաղի Բարեսիրաց անուն ընկերութիւնը հաստատուեալ 1878 թուականին որ իր արգեամբք և ջանիք թաղին վարժարանին նիւթական և բարոյական պիտոյքները հոգալէ զատ հոյակապ շէնք մի ևս կառուցանելով Կեղրոնատեղի և Խորհրդարան ընկերութեան և սնուողք բազմի բերմունքներէն տկարանալով իր նպատակէն թափուր մնացեր էր չորս տարի է, վերականգնեցաւ այս անգամ իր նախնի գրութեանէն առաւել պայծառ և ազգօգուտ նպատակաւ Տարօնոյ մէջ վարժարան մի բանալ և անոր զարգացման հսկել ըստ ամենայնի: Արդէն ընկերութեանս շէնքին մէջ հիմայ հարիւր յիսունի չափ աշակերտք կ'ուսանին: Բնկերութիւն Ձատկէն սկսեալ կիրակնօրեայ լսարան և խօսարան մի ևս ունի բացած զոր շարունակ ամէն կիւրակէ ամէն ուստեք բաղմամբիւ հանդիսականներ կ'առնին անդ, ուր Աղգային խորհրդածութիւններով ատենաբանութիւնք ճառախօսութիւնք և ազգային երգեցողութիւնք կը լինին: Արդարև ներկայ դարուս տիեզերա-

աստ շարժը որ և հայութեան ամօթոյն թղենին թուփերը չորացոյց, այսուհետեւ Մշոյ երիտասարդութիւնը չպիտի կարենայ լքանել որ պիտի զինի իր դարաւոր թշնամոյն՝ տգիտութեան գէմը:

Այս բարոյական պատերազմին մէջը Մուշն իր բազմահայութեամբը անշուշտ ասկէ ետքը իր արժանաւոր տեղը պիտի գրաւէ:

Ասոր՝ թէ և փոքր, այլ ըստ մեզ և Մըշոյ համար մեծ ապացոյց կրնամք ի հըրապարակ հանել Մուշեցւոց երիտասարդներու ի նպաստ դատարարական և յառաջագիւտութեան կազմած ընկերութիւններու և խմբակներու իրարու հետ մրցելու նախանձելի և վայելուչ նոր վիճակը, որ Մուշ մի միայն այս տարի թէ քաղաք և թէ գեղեր Ակ նոր ընկերութիւն և 18 նոր վարժարան բանալու չափ յառաջացած է: Յոյս կայ որ հետզհետէ ամէն տեղ ամէն գեղ վարժարան և ընկերութիւնք բացուին: Վերջապէս դաւաճանքին հետզհետէ Պոլսոյ և ուրիշ տեղերու բարի նախանձով ընկերութիւններ, և յառաջգիւտական օրինակները տեսակէտ բռնելով ինքալ ետ կամ անտարբեր չպիտի մնայ, Արդ այս խնդարեր լուրեր յանկարծ Ձեր Հայրենիք հայրենասիրի հնչեցնելէ զատ ամփոփելով նամակի նպատակը, Բարեսիրաց ընկերութեան դիւանը պատիւ ունի ի հըրապարակ հանել նաև ի նպաստ զարդացման ընկերութեան հետզհետէ սկսեալ նուիրատուաց ցանկ մի, յորս բարեհաճութիւննիդ խնդրելով հաւաստի եմք որ մի առ մի կը հրատարակէք զայն մեր խորին շնորհակալութեամբն հանդերձ:

Դիւան ընդհանուր ժողովոյ Բարեսիրաց ընկերութեան

Ատենադպիր Ատենապետ
Մ. Բնիկ-Սիւսի Ա. Սերոսէ Թադէոս Արոճիւն
24 օգոստոս 1879
Մուշ

Ցանկը ուրիշ անգամ պիտի հրատարակեմք. առ այժմ սա չափ միայն կը սեմք թէ հանգանակեալ գումարը 678 զըջ եղած է:

Իրլանտայի մէջ անկարգութիւնք ծագելով, և գունդ զօրք զրկուելու են Լոնտրայէն:

— Շուվալօթի կոմսը Լոնտրա վերադարձեր է գետապանական պաշտօնով:

— Պիզմարգ իշխանը Վարձէն մեկնել է:

— Տօպրուճայէն 200 տաճիկ ընտանիք իրենց ծախիւք Տաճկաստան գաղթելու հրաման խնդրել են Օսմ: հիւպատոսէն:

— Անգղիոյ պաշտօնէից ժողովը որոշել է խորհրդարանը ժամանակ մ'ևս չը բանալ. սակայն թաղի կարծիք կը յայտնէ թէ Գապուլը զբաւելէն ետքը խորհրդարանին բացումն անհրաժեշտ է. զի այն այն ատեն պիտի որոշուի Անգղիոյ՝ Փօքը-Ալիոյ մէջ բռնելիք քաղա-

քականութիւնը. և այս առանց խորհրդարանին հաճութեան չկրնար լինել:

— Գարձեալ կորչաքօֆի հրաժարականի խնդիր կը ծագի այժմ ալ կըսեն թէ հոկտեմբերի վերջերը պիտի հրաժարի:

— Ռուսաց կայսրուհին Գերմանիոյ երկիրը կը պտըտի: Վօսէն անցնելու ատեն Գերմանիոյ կայսրը և կայսրուհին զինքը ողջունել են:

— Թուրք լրագիրք կը գրեն թէ Սամութիոյ Իքի-Եւզ-Չէշմէ թաշը որ երկու օր առաջ այրեացաւ եղաւ, Սուլթան Սէլիմ Գ ի թագաւորութենէն ի վեր բնաւ հրդեհի երես տեսած չէ եղեր:

— Եգիպտոսի իւրտիվը Աբրահամ փաշայի՝ Գաբու-քեահեասի պաշտօնէն տուած հրաժարականը ընդունել է:

— Մահմուտ Նէտիմ փաշա կառավարական բարձր խնդրոց վրայ իւր կարծիքն յայտնելու պատրաստ ըլլալը ծանուցանելով, որոշուել է ի հարկին անոր կարծիքն առնուլ:

— Մէմօրիալ Տիպիօնաթիդ կը գրէ թէ Օսմ. նախարարաց ժողովը Պիւտճէին վրայ վիճաբանելով, Սուլթանը ժողովին յիշեցուցեր է թէ Ինքը Տաճկաստանի բարեկամ տէրութեանց խոստացած է որ դանձային բարեկարգութեանց վրայ անձամբ հսկէ ինքը: Ուստի կուզէ կայսրութեան վարկը վերկել. և ասոր համար ներքին և արտաքին ամէն փոխառութեանց դէմ ըլլալով, աղու միջոցներ պէտք է գործածել դանձային բարենորոգումները փութացնելու համար:

— Վազըթ կը գրէ թէ Բ. Դուռը խնայողական միջոցներ ձեռք առնուլ սկսած է: Ըստ այսմ որոշեր է Լոնտրայի և Վիէնայի գետապաններէն զատ միւս առաջին կարգի գետապանները ջնջել: Պրուսէլի և Ուաշինկթընի գետապանութիւնները այժմէն ջնջել է. քանի մը օրէն ալ Հուովմի գետապանութիւնը պիտի վերցնէ եղեր: Նոյնպէս սրոշեր է բացի Հասարակաց կրթութեան պաշտօնատունէն միւս բոլոր պաշտօնատանց ամսականները 110 ին 15 զեղչել:

— Պ. տը Հայմէրլէ մայրաքաղաքիս աւստրիական գետապան Ձիշի կոմսին գիր մը գրելով կը յանձնարարէ ծանուցանել Սուլթանին թէ ինքը (Հայմէրլէ) Աւստրիոյ կառավարութեան արտաքին գործոց պաշտօնտեսայ անուանեալ է փոխանակ Անտրաշի կոմսին որոյ հրաժարականն վերջնապէս ընդունուած է: Սոյն իմաստով հեռագիրներ զարնուած են նաև գետապանաց:

— Յունաստանի և Բ. Դրան միջև բանակցութիւնք յաջող վախճան մը չունենալէ զատ հետզհետէ երկարելու կերպարանք մը ստացած են: Գաղղիա այս մասին մեծ տէրութեանց ուշադրութիւնն հրաւիրելով կըսուի թէ սորա բարեկամական դիտողութիւն ըրեր են Բ. Դրան որ վիճաբանութեանց հիմն ընդփոյթ որոշէ: Սակայն չը յուսացուիր որ խնդիրը այս կերպով ալ վերջանայ:

— Սըր Այարա իւր Ատրեստանը

բաժ ուղևորութենէն Մայրաքաղաքս կը վերադառնայ կիրակի օր:

— Մանչէսթըրէն Էլքանա Արմիթաժ և Միքայէլ Եւրոպացիք 10 ական ոսկի նուիրելու են Արարատեան ընկերութեան:

— Տերվիշ փաշայի նախագահութեան ներքև Սպարապետի դուռը կազմեալ զինուորական մասնաժողովը բանակաց հրամանատարներէն խնդրել է որ իրենց բանակին մէջ թոշակ մը սահմանելով ծառայութենէ դադրելու յարմար սպայից ցանկը զրկեն:

— Սուտանի կուսակալ Կորտօն փաշա հրաժարական տուել է, որոյ պատճառը դերիներու ծառայութեան մասին իւր և թտիվին մէջ ծագած անհամաձայնութիւնն է: Եւ սակայն Կորտօն փաշա իւր պաշտօնը պիտի շարունակէ մինչև որ իւրտիվին և Հապէշաց թագաւորին միջև սկսած բանակցութիւնն աւարտէ: Հապէշաց թագաւորը կարմիր ծովուն վրայ նաւահանգիստ մը կուզէ: Անգղիոյ կառավարութիւնը կաշխատի եղեր Կորտօն փաշայի պաշտօնը դիւրացնելու ի նպաստ Հապէշիստանի:

— Ռուսական Օրացոյցը Լատինականէն 11 աւուր տարբերութիւն ունենալով և այս առթիւ դժուարութիւնք ծագելով Ռուսիոյ՝ արեւմտեան Եւրոպիոյ հետ ունեցած առետրական գործառնութեանց մասին, Ռուսական Ակադէմիան այս խնդրով պիտի դադի եղեր և պիտի ջանայ Ռուսական օրացոյցը թողուլ Դրբիգորեան օրացոյցին հետեւիլ:

— Պէշիկթաշցի ԱՏմէտ էֆ. անուն տաճիկ մը ըստ ոմանց մահուան ըստ այլոց 15 տարի չլթայակապ բանտարկութեան դատապարտուել է: Սա Միսիօ նարներէն 5 ոսկի ամսական առնելով կրօնական գրքեր Եւրոպական լեղուներու կը թարգմանէ եղեր, որ իրբև սըրբապղծութիւն նկատուել է: ԱՏմէտ էֆէնտին դատողները Եէյս-Իւլ-Իսլամի միւսթէշար Նէճիպ էֆէնտին, ֆէթվաէմինի նուրի էֆէնտի և ուրիշ իւլէմաներ են:

— Տպագրութեան դիւանին տնօրէն Բէրթէվ էֆէնտին սրգէն ունեցած երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշանն երկրորդ կարգի փոխուեցաւ Պուլղարիոյ իշխանութեան մօտ կատարած պաշտօնին համար:

— Սարը-Եարի մօտ կատարուած ոճրին հետեւեալ դիշերը՝ շարագործաց խմբակ մը Պաղչէ քէօյ այգիլի մը մէջ գտնուած փոքրիկ տուն մի մտնելով, հոն բնակող հինգ այգեպաններէն երկուքն սպաննեցին և միւս երկուքը վերաւորեցին, իսկ հինգերորդն, որ ուրիշ սենեկի մը մէջ կը պառկէր, ոստիկանութիւն բերելու զնաց բայց Պէօյիւրտէրէի պահականոցին մէջ պատրաստ օստիկան չկար, և թէպէտ զօրք զրկուեցաւ, բայց այն ալ ուշ հասան: Ոճրագործք վախած էին:

— Վեհ. Սուլթանը Այազ-Աղայի ազարակը երկրագործական դպրոցի փոխարկեր է, ուր երկրագործական արհեստին ուսմանը պիտի պարապին Սուլթանին խնամոցը յանձնուած գաղթական տղաքները, Սոյն դպրոցի անսլուծիւնը ձեւովէ թիւային և Ամասեան էֆէնտի յանձնուեր է :

— Պուլղարիոյ Ժողովուրդը բողոքագիր մը կատարագրէ ընդդէմ կառավարութեան Սահմանադրութեան դէմ դործած լինելու ամբաստանութեամբ :

Սոյն բողոքագիրը նորակազմ Երեսփոխանական Ժողովոյ պիտի մատուցուի որ կը կարծուի թէ զկառավարութիւնը չպիտի ջատագովէ :

Այս մասին բաւական շարժում կայ Պուլղար Ժողովրդեան մէջ որ զանազան քաղաքացի մէջ գումարումներ կընէ :

— Պուլղարիոյ իշխանին մօրաքոյրը Վարչավիոյ մէջ մանկավարժական թերթ մը սկսեր է հրատարակել :

— Սէլանիկ քաղաքը ամրացնելու պէտքն զգացուելով, Պուլղարի վաչայի յանձնուեր է որ ճարտարապետական քանի մը սպայ հետն առնելով քանի մը օրէն Սէլանիկ պիտի մեկնի :

— Պուլղարիոյ կառավարութիւնը Պուլղարիոյ եկեղեցական և կղերական վերակազմութեան մասին ծրագիր մը մատուցեր է Ռուսիոյ կայսեր զոր և ընդուներ է :

— Բ. Դուռը զարնուած հեռագիր մը վտանգաւոր կը ներկայացնէ Չարին հիւանդութիւնը :

— Պարսից կառավարութիւնը Պուլղարիոյ գլխաւոր քաղաքացի մէջ գործակատարներ կարգեր է որոց մեծ մասը հայազգի են :

— Պուլղարիոյ Բերդաքաղաքացի մէջ մեծ պատրաստութիւնք կը լինին Պուլղարիոյ իշխանն ընդունելու համար :

ՄեծՊոռնիքեան Վարժարան
ԱՂԶԿԱՆՅ ՅԱՏԿԱՅՅԱԼ
Վարժարանս բացուած և արդէն սկսած է ընդունել զիշերթթիկ և ցերեկեայ Աշակերտուհիք թուականէս սկսեալ դասախօսութեանց իսկ ձեռնակած է :
19 սեպտ. 1879
Իճատիէ
Մ. Ս. Մեղչուբեան

Թօփ-Գալուսի Եէնի-Պաղչէ ըսուած թաղը 5 սենեակ և 500 կանգուն պարտէզ և մէկ ջրհոր ունեցող տուն մը ծախու ելած է : Ուղղը պէտք է դիմէ Մահմուտ Փաշա թիւ 297 Հաղըքը Օննիկ աղա Պարտիզպանեանի խանութը :

ՓԱՍՏԱՐԱՆ
Գարեջին Լեֆէրէ Մեղչուբեան
Իւր գրասենեակը փոխադրած է Պաղչէ-Գարու Բասիմ-Փաշա խան թիւ 13 և 14 սենեակները, զոր կը ծանուցանէ ի գլխութիւն յաճախորդաց :

ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԲԷԼԻՍԻԻ
(Մայրէջ 55)
ՄԱՍՆ Բ.

Դատողութիւնք եւ սրամախոհութիւնք
Երաց եւ էակաց վրայ օրինակք եւ նիւթք բերանացի եւ դրաւոր հրահանգաց 7 էն 10 տարեկան տղայոց համար :

Թ. ԹԷՐԶԵԱՆ

Սոյն գրքոյին Ա. մասը մեծ ընդունելութիւն գտած ըլլալով, Բ. մասն ալ ի լոյս ընծայեալ է այս անգամ. հեղինակը լաւ ընթրութիւն ըրած է եւ շատ յարմար է ազգ. վարժարանաց մէջ իւր դասագիրք գործածուելու :

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով ի գին հինգ դրու :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՅԱՅ
Յօրինչ

Ե. Մ. ՍԻՐԱՔԵԱՆ

Ահաւասիկ առաջին դասագիրք մը ընթերցանութեան, որ տղայոց հասկացողութեան յարմար բարոյալից եւ դրօսալի նիւթեր պարունակելէ դատ, քսանի չափ յատկապէս փորագրեալ պատկերներով ճոխացեալ է :

Սոյն գրքոյը 112 երեսէ բաղկացեալ, մաքուր կերպով տպագրեալ եւ կաղմեալ ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամբի, Չիլինկիրէր ճատտեսի թիւ 2. Ս. Ղուկասեան գրատունը եւ սուրիշ գրավաճառաց քով :

Գին 2 1/2 դր. արծաթ :

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԳՐԵՑ

Գարեջին Կարապետ Մեղչուբեան

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

Հայաստանեայց եկեղեցւոյ բողոքաւորութիւն վարդապետին երկասիրած սոյն կարևոր դասագիրքը, որոյ առաջին տպագրութիւնը սուղ միջոցի մէջ սպառեցաւ, երկրորդ անգամ ի լոյս ընծայեցաւ վերաքննութեամբ Արժ. հեղինակին :

Սոյն մատենիկ 19 գեղեցիկ պատկերներով 14 է երեսէ կը բաղկանայ և կը ծախուի Եէնի-ճամբի Չիլինկիրէր ճատտեսի, թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով, Գին 60 փարա արծաթ :

ՄԻ ԿԱՔԻԼ ԱՐՏՈՐ

ԶՈՐ ԿԸ ՀԵՂՈՒ
ՍԻՍՍԿ
ՀԱՅ ՄՈՒԹԻՐԻՆ ՎՐԱՅ

Հեղինակին անցեալ տարի տարեդարձի առթիւ խօսած ատենախօսութիւնըն է, ուր, պատերազմի ատեն, Հայ աշխարհի աղէտներն կը պատկերանան ընթերցողին առջև մի ազդու կերպարանով :

Սոյն գրքոյին օգտակարապէս կրնայ կարգացուիլ ամէն ազգայիններէ, որոց քաջալերութեանն իրաւամբ արժանի է երիտասարդ Հեղինակին :

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով գին 2 1/2 դր. արծաթ :

ԹՈՐՈՍ ԱՂԱՔՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՍՄՐՈՐԴ

Գ. Վ. Մեղչուբեան
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հեղինակը, որ ծանօթ է իր սյլ և այլ գրաւոր գեղեցիկ ու պիտանի երկիրով, այս անգամ ի լոյս ածից իր անցեալ տարւոյ ի Հայաստան բրած ուղի որութեան մէկ մասն, հարկ չկայ ըսելու թէ ո՞րքան հետաքրքրական է ամեն Հայուն համար տեղեկանալ Հայրենեաց և հոն բնակեալ հայոց ազգային քաղաքական և մտաւորական կենաց մասնաւորապէս մեր օրերու մէջ :

Թէպէտ իբրև ուղևոր կը պատմէ իւր տեսած դիտած իրեր, անձեր և տեղեր բայց և իբրև Հայ հեղինակ և հայրենասէր հոգի՝ զգացմամբ լի իմաստուն դիտողութիւններ կընէ, հանդերձ քատորագրութեամբ տեղեաց և յատկապէս վերջինից ու պատմական վայրաց, ծանօթութիւն կուտայ զանազան ցեղերու և կենցաղավարութեանց վրայ և այլն : Ուրիշ կողմնէ ալ մեծ առաւելութիւն մը ունի, այն է ձեռագիր մատենից յիշատակարանները և ցանկը և ի վերջոյ՝ Հայոց նշանագրերէն մաս մը Գինն է կէս մէծիտ :

Կը վաճառուի Մերձան Վ. Յ. Մարգարեան գրավաճառի խանութք, և Եէնի-ճամբի փողոցը Ս. Ղուկասեանի գրատունը և ամէն Հայ գրավաճառաց քով :

ՀԱՄԱՌՕՏ

ՄԱՐՄԵԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հրատարակ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Սոյն կարևոր և օգտակար գրքոյը, որ թէ՛ ի պէտս վարժարանաց և թէ՛ առանձինն ուսանողաց կրնայ միանգամայն ծառայել, յստակ բացատրութեամբ, 120 փայտատիպ պատկերք ճոխացեալ և 140 երեսէ բաղկացեալ ընտիր դասագիրք մ'է, գինն է կէս արծաթ մէծիտ, գաղղ. բնագրին գինն ըլլալով 5 ու կէս ֆր.)
Կ'գտնուի Կ. Պոլիս Սուլթան Համամխաստ էֆ. խան թիւ 17, Նշան էֆ. և գրավաճառաց քով :

ԱՆՅԵԱԼԻՆ ՈՒ ԱՊՊԳԱՅ

ԿԱՄ

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՋՄՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

Տիրան Գ. Քէլէկեան

Չօնէն, նախաբանէն և վերջաբանէն ի զատ, կը պարունակէ տղգին կրօնական բաժանմանց ու ազգային Սահմանադրութեան հաստատուելուն պատմական յիշատակագրերն, ու համառօտ ըննադատութիւնք անոնց վրայ :
Գործոյն մէջ լիովին բացատրուած է նաև ազգային վերակազմութեան ստիպողական ու անհրաժեշտ պէտքերն :
Կը ծախուի գլխաւոր Հայ գրավաճառաց քով :
Գինն է 2 դրու արծաթ :

ՏԵՐ-ԻՄԲԱԳԻՐ

Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՊԱԿՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Րիգա փայտ խան թիւ 3